ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԲԱԲԿԵՆ Ե. ՍԱՐԿԻՍՈՎԻՆ

Հունվարի 18-ին, հինգշաբթի օրը, առավոտյան ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը Նոր տարվա առիթով պաշտոնական Իր առաջին այցելությունը տվեց ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահ Բ. Ե. Սարկիսովին:

Այս առիթով Հայոց Հայրապետին ընկերակցում էին Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը և Ադրբեջանի հայոց թեմի առաջնորդ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը:

Հայոց Հայրապետի և Հայաստանի Հանրապետության մեծահարգ պարոն նախագահի միջև տեղի ունեցավ ջերմ զրույց, որին ներկա էր նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Սարգիս Գասպարյանը: